լինէր, ստորոտին և՛ չը պիտի կարողանայր մերձենալ, որպէս «զմնացեալն արկին փախստական» խօսքերն և՛ ապացոյց են։

Կերևի որ ամենանեղ միջոցին հայերը ապաւինած են այս տեղ։

«Կապոյտ, վասն զի անառիկ էր ի Մարդկանէ ընդ մեծ ամուրս կապուտ լերինն»։

Որպէս Մատուռայ բերդն ունի Թէքքէ-Բինէ բնական բերդն մեծ անտառով, նոյնպէս Կապուտայ բերդն և՛ ունի, որ այժմ կասեն Կապուտայ Թէքքէ-Բինէ, որ այս երկուքին միջէն Կապուտայ ջուրը կը հոսի, և՛ են իրարու հանդէպ և՛ տեսանելի։

Կապոյտ կընկնի յարևելս Մատուռայ, աւելի Երասխայ մօտ՝ քան Մատուռ։

«Ընդ այլոց երևելի վանօրէից շինեցաւ վայելչազարդ տեղին, որ Կապուտաքարն անուանի յԱրշարունեաց գաւառի»։

Որպէս վերև ասացինք աջ կողմից Կապուտ իջնող Մանամշա ասուած ձորակի մէջ «Վայելչազարդ» վայր մի կայ և՛ վանքի մի աւերակներն, տապանաքարեր արձանագրութիւններով լի, զորս չեմ կարողացած տեսնել։

«Եկ և գնաց (Սմբատ) սակաւ զօրօք յամուրս քարանձաւին Կապուտայ, որ ի ձորն Երասխայ այն է Կապոյտ բերդ ի գաւառին Արշարունեաց Արարատեան աշխարհի, և անդ ամրացեալ դադարեցան զի այն տեղին անառիկ էր ի մարդկանէ, դժուարին էր ասպատակաց և հինից զայն վտանգել»։

Կերևի Սմբատ քանի պատճառաւ ապաւինած է Կապոյտ և՛ ոչ Մատուռ։ Առաջին՝ որ Երասխայ մօտ լինելուն հայի դիւրութիւն ունենայ զօրքը կերակրե-